

26n

715-718, 2347

19 997

Պատմական Գրադարանի ներկայացրած

18-10  
v  
Թ/Բ

№ 49 Հրատ. „Աղբիւր“ եւ „Տարազ“ պատկ. հանդէսների № 49

ՅԱՐ. ՔՈՒՄԱՆԵԱՆՑ

Խ Օ Լ Ե Ր

1894

Վոյճիլ մէկ արարածով



(Արտատպած «ՏԱՐԱԶԻՑ»)



Թ Ի Ց Լ Ի Ս

ՅՊԱՐԱՆ „ԱՐՐՐ“ Տ. ՆԱԳԱՐԵԱՆ

1892



Дозв. ценз. Тифлисъ 2-го октября 1892 года.  
Тип. „АРОРЪ“, Т. Я. Назарьянъ, Баятин. ул.

4 715-шо

29 715



ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՂԱԶԱՐ ՂԱՀՐԱՄԱՆԻՉ—երիտասարդ (Թաղքեայ  
երկայնավիզ ոտնամաններով (ВАЛИНКИ)

ՆԱԶԼՈՒ—սրա պառաւ մայրը,

ՍՏԵՓԱՆ—ծառան:

ԲԺԻՇԿ.

Երրօրական ձեռով սարքած սենեակ.—Սեղանների եւ լուսամուտների վրայ դրած են ամփոփակներ [копакъ] եւ դեղօրայքի սրակներ. երկու հատ սրակիչ (пудвервзаторъ) եւ մարմնի ջերմաչափ. պատի վրայ կախած է մի ջերմաչափ. անկիւնում մի վաննա, իսկ հանդիսականների դիմաց մի պահարան

Տ Ե Ս Ի Լ I.

Ղազար լրագրող ձեռքին)

Ա՛խ, Աստուած... Բազում էս ինչքան մարդ է կոտորում (կարդալով). «Դադստանի նահանգապետը հաղորդում է, որ Շուբայում խօլերայով հիւանդացել են 340, առողջացել են 94, մեռել են 246... Շրջանում մնացել են 1863»: Էլ ո՞վ մնաց սաղ... (կարդալով) «Ստավրապօլի նահանգապետը հաղորդում է, որ նահանգում հիւանդացել են 860, մեռել են 631, մնում է 129» (շարտելով լրագրողը) Բաւոկան է... Քանի կարդում եմ, էնքան դարհուրում եմ... Խօլեր խօսքը լսելուն պէ՛ս՝ խկոյն մարմինս սրտում է... Է՛յ, Ստեփան:

Տ Ե Ս Ի Լ II.

Ղազար եւ Ստեփան

Ստեփան

Համմէ, աղա:

Ղազար

Դռները սինդ կողպիւր և մարդ չըթողնես դայ էս-  
տեղ... ոչ ոքի, հասկանճում ես, ոչ ոքի... Թէ չէ անիծ-  
ւածները միկրորներ կրբերեն...

Ստեփան

Աղն, ասում ես—Բնչ կրբերեն...

Ղազար

Խրացել ես, Բնչ է —միկրորներ... հասկանճում ես,  
միկրորներ...

Ստեփան

Աղա, գլուխս մեռնի, Թէ մի բան լինեմ հասկա-  
նում...

Ղազար

Տօ, չիմար, միկրոր, բացիւ...

Ստեփան

Աղն, լեզգէվար է, Թէ փռանցուգէվար...

Ղազար

Էդ քն բանը չէ... քեզ ասում են դռները փակիւր  
և ոչ ոքի չըթողնես... հասկանճում ես... ոչ ոքի չըթող  
նես... Դէ գնան, Բնչ ես բերանդ բաց արել և երեսիս  
նայում...

Ստեփան [առանձին]

Քանի գնում է, էնքան գժւում է աղաս... [գնում է

Տ Ե Ս Ի Լ III.

Ղազար (մենակ)

Մե քեզ կարբուկա շաղ տամ, Թէ չէվատտարի է...  
[Բաց է անում մի սրակ եւ սկսում է սրսկել կարբուկան Թթուով]  
էս Բնչ չիմար պուլվերիզատոր է... կարծես, երե-  
խայի խաղալիկ լինի... Է՛ր, Ստեփան:

Տ Ե Ս Ի Լ IV.

Ղազար եւ Ստեփան

Ստեփան

Համմէ, աղա... (առանձին) էլի կամ աղն է սրակաս,  
կտմ մաղը...

Ղազար

Դռները փակեցիւր...

Ստեփան

Հրամմէլ ես, աղա...

Ղազար

Էս պուլվերիզատորը շատ սրտիկ է... դրա շինողին  
ես Բնչ ասեմ... Իսկի բանի պէտք չէ...

Ստեփան

Ինչը՞, աղն...

Ղազար (օրոջ տառով սրսկեջը)

Ձահռումարը, Բնչը—էս, էս, էս եմ ասում, Բնչը...

Ստեփան

Հն, էդ գիտեմ... զուռնան...

Ղազար

Ղաւալօլի դուքանի մօտ մի ժեշտի ուստայ կայ,  
Ճանաչում ես...

Ստեփան

Հրամմէլ ես, Ճանաչում եմ... էն որ մի փանայր առար  
բաղչի համար...

Ղազար

Հն, հէնց էդ է... Ինքն էլ մի բարակ-բարակ, լզար-  
լզար տղայ է...

Ստեփան

Հրամմէլ ես, Ճանաչում եմ... (ման է գալիս կաղաղով)  
Ինքն էլ, որ հսէնց սխտոր է թակում...

Ղազար

Հն. մի շուտ վազըր նրա մօտ ու մի հատ մեծ պուլկե-  
րիգատօր եմ զակազ տւել, առ բեր... [տալով սրսկիւն] Ա՛յ,  
սրանից եմ զակազ տւել... էս էլ հետդ տար և ցոյց  
տուր... ասել եմ էնպէս շինի, որ ամեն մի կողքը մի ար-  
շն լինի, որ կարբօլիան շատրւանի պէս շարտի... հաս-  
կանում ես...

Ստեփան

Հասկանում եմ, աղա... որ շատրւանի պէս շարտի...  
հասկանում եմ...

Ղազար

Դէ գնն... բայց կըչախես, անպատճառ մի արշն  
լինի...

Ստեփան

Բաշուտան, աղն, կըչախեմ... [զուրս է գնում]:

Տ Ե Ս Ի Լ Վ

Ղազար (մենակ)

Էս անիծւած ճանճերը շատ վտանգաւոր են... (մի  
ամիտփակի տակից հանում է ծխախոտ եւ սկսում է ծխել)  
Կարող են միկրօբներ բերել իրանց թւերի և ոտների  
վրայ... (Պաշկիսակով սկսում է բշել ծանծանրիս) ք՛շ... ք՛շ...  
տես, խիլի վախեցում են... ք՛շ... ք՛շ... դէպի լուսա-  
մուտ, այ անպիտաներ... ք՛շ... սօ՛ ձեզ հետ չեմ...  
քշ... (յանկարծ մի ցնցում գործելով զարհուրած յետ է թռչում)  
Օ՛յ, օ՛յ... մէկը հստեց քթիս... հիմա, ո՞վ գիտէ, թէ ինչ  
կըլինեմ... (դիտելով իրան հայելու մէջ): Տեսնեմ, քիթս խօ-  
չի կծկեց... օ, մի տեսակ թուրութիւն եմ զգում... ան-  
գութ ճանճի միկրօբ... (դիտելով հայելու մէջ): Չէ, փառք  
Աստուծոյ... դեռ ոչինչ չըկայ... քիթս դեռ չի կուչ եկել...  
Ամեն տեսակ զգուշութիւն գործ եմ դնում, յոյս կայ, որ  
խօլեր չընկնեմ... (ածում է մի սրակից կաթիլներ): Մի քիչ  
Բօտիկնի կապի խմեմ... թէ չէ վատ տարել է, հարկաւոր  
է ստամոքսը միշտ կապւած պահել... [խմում է]: Ամեն  
տեսակ զգուշութիւն ես գործ դնեմ և ճանճերի ձեռքին  
գերի մնամ... Աստուած վեր կառնի... Էս ըսպէս բոլորի  
օխտիցը կըգնամ... (բարկացած խփում է գլխարկը պատերին,  
առաստաղին, յատակին...) Ք՛շ... ք՛շ... աւանակներ...  
ք՛շ... ձեզ հետ չեմ... ք՛շ... խոզի ձուտեր... ք՛շ...  
միթոնի դաւախներ... ք՛շ... աներեսներ... ք՛շ... հոգ-

վեալնե՛ր... քչ՛շ... ան ամօթնե՛ր... քչ՛շ... աննամուսնե՛ր...  
 ուզո՞ւմ է՞ք ինձ սաղ-սաղ սպանել... քչ՛շ... ես մեղք չեմ...  
 քչ՛շ... [յանկարծ սայթաքում է եւ՝ գրուիք ղեպցնելով դրան,  
 վայրէ ընկնում] է՛յ, օգնեցէ՛ք, Ստեփանն... Ստեփանն...  
 [Մտնում է նազյուն սարսափած]

**Տ Ե Ս Ի Լ VI**

Ղազար եւ նազյուն

Նազյուն

Ի՞նչ է, ի՞նչ է... Ղազար ջան... ի՞նչ է սրտահեղ...

Ղազար (վեր կենալով)

Ո՛ւ՛՛՛՛՛՛... ի՛նչ... ճակատս կոտրեց... անիծւած ճան-  
 ճերին քշում էի, յանկարծ ոտս սլքեց... ի՛նչ ճակատս...  
 (ղիտելով հայելու մէջ) Մայրիկ, վախենում եմ, որ խօսեր  
 ընկնեմ...

Նազյուն (խաշակնքելով սուսմին)

է՛յ, սուրբ Աստուածածին, դու ողորմես... (բարձր)  
 Որդի, մատաղ կտրի, մատանդ... աղօթք արն... Ղազար  
 ջան...

Ղազար

Ղահլէս պիտի տանես քո մատաղովը... քանի՛ ա-  
 սես... բաւական չէ...

Նազյուն

Այ տղայ, գժւել էս... ուզում ես, որ Աստուած մեզ  
 վրայ բարկանայ...

Ղազար

Աստուած էն ժամանակ կըբարկանայ, երբ ես ձեռ-  
 քերս ծալեմ և սուանց նախագգուշութիւնները նստեմ...  
 Նա էղպէս մարդկանց չի սիրում... Նա մեզ աւել է խելք

և բանականութիւն, որ մեք ինքներս պաշտպանենք...

Նազյուն

էղպէս բաներ մը ասա, որդի, մահացու մեղք է...  
 մարդու ճակատին ինչ գրւած է, է՛ն էլ պիտի կատարւի,  
 դու հազար ասն... Որդի, խելքդ գրուիչ հաւաքեր...  
 մատաղ կտրի, աղօթք արն, թէ չէ՛ դու էլ ես մեղք,  
 ես էլ...

Ղազար

Ի՛է, գլխի գայլի աւետարան մը կարդալ... հէնց  
 ամեն տեղ պառւանները էղպէս են ասում, որ խօսերը  
 քանի գնում է, է՛նքան տարածւում է... Գնն, գնն, գոր-  
 ծիղ և քո խրատները քեզ համար սահլը...

Նազյուն

Ի՛նչ ես գիտում, Ղազար, յետոյ ինքդ կըլիոյժանես...  
 [Գուրս է գնում]:

**Տ Ե Ս Ի Լ VII**

Ղազար (մենակ)

Ասում եմ մի քիչ էլ կարբօլիա փչեմ, թէ չէ՛ վատ  
 տարի է... (սկսում է սրսկել): Սա էլ դառաւ պուլլերիգա-  
 սօր էլի... Կարծես տիկի՛նները դուխի փչելու լինի...  
 (Մտնում է Ստեփանը մի մեծ սրսկիչ ձեռքին):

**Տ Ե Ս Ի Լ VIII**

Ղազար եւ Ստեփանն

Ստեփանն

Աղն, բերեցի... գնացի, տեսայ, որ պատրաստ է...  
 ամա մէկ կողքը մը արլինից պակաս է, չափեցի...



Ղազար

Հեռու, հեռու... մի մօտենալ... Թող կարբօլկա  
փչեմ, չետոյ... Թէ չէ միկրօբներ կըլինես բերած (մօտե-  
նում է Ստեփանին կարբօլկա սրսկելով):

Ստեփանն (յետ ու յետ փակչելով)

Աղան, Աստուած վկայ է, որ ոչինչ չեմ բերել էս  
զուռնից սաւահի...

Ղազար (սրսկելով)

Կանգնիր, չիմար... դու միկրօբին չես տեսնիլ...

Ստեփանն (յետ ու յետ փակչելով)

Աղա, խի՛ չեմ տեսնիլ, քօռ խօ չեմ, փառք Ասաը-  
ծու... (ծածկնով քիթը) փնւփ... փնւփ... ի՛նչ կծու հոտ ու-  
նի... փնւփ...

Ղազար (սրսկելով)

Ի՛նչ ես դէս ու դէն փոխչու՞մ, չիմար... կանգնիր...  
էդ սուրբերիգատօրն էլ բարձր պահիր, որ դրա վրայ էլ  
փչեմ...

Ստեփանն (ստանձին աւ բարձրացնելով սրսկչը)

Օվվէ, զահրա տարան... (բարձր) ըհան... աղան, քեզ  
մատաղ, բօրն... ախր ի՛նչ կոյ, որ է... ախր էդքան խի՛  
ես վախում...

Ղազար (սրսկելով)

Էդ քօ խելքի բան չէ... կանգնիր, բարձր պահիր...  
էդպէս, ոտքերդ էլ բարձր պահիր, որ նրանց տակէլ փչեմ...

Ստեփանն [բարձրացնելով մի ոտը]

Աղան, ուզում ես, երկու ոտս դնեմ ուսերիս...  
(բարձրացնում է միս ոտը):

Ղազար [սրսկելով]

Հանաքի ժամանակ չէ... ոտներդ բարձր պահիր...

Ստեփանն

Աղան, վալլանհ-բօլա... բելլան-բօլա...

Ղազար

Ի՛է հիմա, Ստեփան, էդ [Թագա սուրբերիգատօրն  
էլ դու էլ ինձ վրայ փչիր... Թէ չէ վատ տարի է...

Ստեփանն [ստանձին]

Աստուած գիտենայ, դրուստ աչքու՞մը պիտի փչեմ...  
(բարձր) Աղան, Թագա զուռնան չնորհաւոր լինի... բարձր  
մաշխ... (սկսում է սրսկել):

Ղազար [շուռ զաւով այս ու այն կողմ]

Կամո՞ց .. կամո՞ց... օհօ հօ հօ... շորերս բորբոլին  
Թըջեցիր... բաւական է... կամո՞ց... բաւական է... տօ,  
քե՞զ չեմ ասում բաւական է...

Ստեփանն [Թողնելով սրսկիչը]

Աղա, աչքս չըղիւզի, ի՛նչ լաւ շարտում է... դրուստ  
շատրւան է էլի... ամա ախտոս, որ մի կողքը արշինից  
սրսկաս է...

(Նազլուն հեռից նայում է)

Ղազար

Վնաս չունի, շատ լաւն է...

Տ Ե Ս Ի Լ IX

Նրսնք եւ Նագրոս

Նագրոս

Որդի, մատաղ կտրի, մատանդ... էդպէս բաներով  
դու չես կարող Աստուծու ուղարկած պատիժը հեռացնել...  
Ղազար ջան, մատաղ կտրի...

Ղազար (ստանձին)

Ըհը՛, էլի սկսեց իրա ճիւղնուըը. (քարճը) Տօ, քանք՛  
ասես, բաւական չէ՛...

Ստեփանն (Նազուին)

Աղջիկ-պարոն, էնքան մատաղ-մատաղ ասեցիր, որ  
սիրտս մատաղի խաշամա է ուզում... ճշմարիտ, բերանս  
ջրակալեց...

Նազուլու

Ղազար ջան, Աստուած կբարկանայ... մեռնեմ Նրա  
գօրութեանը... աղօթք արահ, որդի...

Ղազար (Աննետով մեծ սրսկիչը)

Մայրիկ, բեր քեզ վրայ էլ փչեմ... կանց... քեզ վրայ  
էլ փչեմ...

Նազուլու [Փակշէտով]

Ես չեմ ուզում... ես չեմ ուզում... (դուրս է գնում):

Տ Ե Ս Ի Լ X

Ստեփանն եւ Ղազար.

Ղազար

Ստեփանն, էս օթախը մի ընւ մաքրիր... մուղայթ  
կանց, որ էս շուշէքը, պուզիբոկները չըկտորես... հասկա-  
նում ես, թէ չէ՛ աչքերդ կըհանեմ... էս սկամիքն էլ կար-  
գի բեր... բոլոր ճանճերին էլ դուրս քշի, թէ չէ՛ երկիւ-  
ղալի տարի է... էս կալալներին ձեռք չըտաս... Ինչք  
որ ձեռք տալու լինես, ձեռքերդ կարբօլիով կըլւանաս  
առաջ... էս պուլլերիգատորները մուղայթ կաց, որ չը-  
կտորես... շնտ, ինչ որ ասացի՛ բոլորը կատարիր, ես էլ  
էս սահաթիս գալիս եմ... շնտ, էս սահաթիս գալիս եմ...

(Դուրս է գնում):

Տ Ե Ս Ի Լ XI

Ստեփանն (շարած)

Ձեր մեղքին տէր դառնամ, թէ էս մի բան հաս-  
կացայ... էնքան վրա-վրա տուց, ոչինչ չըմտաւ գլուխս...  
Խոստովանք լինի, էս մեր աղէն ինչ սարսաղ մարդ է:  
Խօլերից էնքան վախում է, որ չի գիտում թէ որտեղ  
փակչի... քիչ է մնում, որ մկան ծակը հազար թուծա-  
նով առնի ու մտնի նրա մէջը... Տեսէք, ինչ ծրտի-պրտի  
բաներ է դարսել ստօլի ու ախօղաների վրայ: Մինը չը-  
կայ, որ ասի, ախր խօլերը ինչ է, որ էքքան դողդողում  
ես... Իրա խեղքը շատ գլխին է, ինձ էլ խրատներ է տա-  
լիս—մըգեղէն չ'ուտես, շուտ-շուտ շորերդ փոխիր, ձեռ-  
քերդ քացախով լւացիր, գուռնան փչի... տօ, գուռնա  
փչելով խօլեր կըխախչի... Տօ, բերանիս լազաթը կըտ-  
րեմ, թէ խօլեր կանց... Ձեր արեւը վկայ է, մինչև էսօր  
ինչոր աղէս խրատներ է տուել, ես դիտ հակառակն եմ  
արել... Նա գիշեր-ցերեկ դողդողում է, մուղայթ է կե-  
նում, փահրեզ է պահում, էսպէս դեղեր է պահում, խի  
ես՝ ոչ. հիմա տեսէք ինչս է պակասել... տեսէք—նւմ վիզն  
է հաստ, իմը թէ նրանը... (աննետով մեծ ամիտիակ) Սրան  
մտիկ արէք... բաներ է դարսել... (ձեռքը շարժելով դէսն  
աջ ու ձախ) փանչ, փանչ, փանչ, փանչ... Հը՛, ասես՝ դերվելի  
փափախ լինի... (ծածկում է գլուխը ամիտիակով եւ թռչկոտելով  
սկսում է հայելու առաջ երգել).

«Սարի աղջիկ, մարալօ, մարալօ՛,  
Տնը ինձ պաշիկ, մարալօ, մարալօ,  
Հէ՛յ դալալ, հէ՛ դալալ, դալալ,  
Սարի աղջիկ, մարալօ, մարալօ»...

(Երգելու ժամանակ վրա է հասնում Ղազարը)

Տ Ե Ս Ի Լ XII.

Ղազար եւ Ստեփանն.

Ղազար

Տօ, փուչ կենդանի, էդ Բճչ դալաթներ ես անում...  
քեզ ասել եմ—օթախը կարգի բեր, դու մաղբարազու-  
թիւններ ես անում...

Ստեփանն (շշուած դնում է ամփոփակը իրա տեղը)

Աղա, քեզ մատաղ, էլ չեմ անիլ...

Ղազար

Կորիք դուրս, անիծւած... կորիք դուրս, էլ աչքումս  
չերևւս...

Ստեփանն

Աղա, չիմացայ... կըբախշես... (դուրս է գնում)

Տ Ե Ս Ի Լ XIII

Ղազար (Մենակ)

Ձի էլ ամաչում... անզգամ, էստեղ սրտիս դանակ խիեո  
մի կաթիլ արիւն չի դուրս գալ. խի սա Բճչ բաներ է ա-  
նում... Օյ, Օյ, գլուխս պտտում է... մարմինս էլ մի քիչ  
թուլացաւ... վախենում եմ խօլեր լինի... [դիտելով ձեռքը]  
Տեսնեմ խօ կուչ չի գալիս... Ձէ, փառք Աստուծոյ, դեռ  
ոչինչ չըկայ, բայց վախենում եմ, որ չանկարծ փխտեմ...  
Փորս էլ զրդուում է... Աստուած, ողորմիր... [սովելով փորը]  
Ձէ, բանս խարաք է... [դիտելով դէմքը հայելու մէջ] Ճա-  
կատս էլ կապտել է... ես ինձ վատ եմ զգում... Ինչպէս  
երևում է, փորս մըսել է... Ստեփանն, Ստեփանն... (Ստե-  
փաննը երեւում է դռան մօտ) Մի տաք շոր բեր, մի շալ բեր  
կամ մի հատ բալիշ... շուտ... (Ստեփաննը խօլոյն բերում է մի

բարձ) Մի կապելու բան էլ բեր... շուտ... [Ստեփաննը գնում է]  
Նշանները վատ են երևում, բանս բուրդ է... Ախ, Աս-  
տուած, դու վերջս բարի անես... Ստեփանն, ոտդ կտարւն,  
շուտ...

[Ստեփաննը բերում է մի թոկ]

Տ Ե Ս Ի Լ XIV

Ղազար եւ Ստեփանն

Ղազար [Բարձը դնելով փորին]

Ստեփանն, շուտով կապիր... մըսել եմ, փորս զրդ-  
ուում է...

Ստեփանն (կապելով բարձը թոկով)

Ախր, աղա ջան, խի ես էդպէս անում, է... Բճչ  
կայ, փառք Աստուծու, որ էդպէս վախում ես... աղա, պիճնդ  
կապեմ... ըհը... էսպէս լաւ է:

Ղազար

Ախր, ճանճէր, Աստուած ձեր դատաստանը անի...  
դիւր դուք էք մեղաւոր... վնչ... Ստեփանն, տես խօ կուչ  
չեմ գալիս...

Ստեփանն

Ո՛չ, ողա, ընդհակառակը՝ շատ տուրդել ես... վախել  
մի, բան չըկայ... իմ արեւը, բան չըկայ:

Ղազարը [գննելով ձեռքերը]

Ձէ, կուչ եմ գալիս... ձեռքերս ուղում են կապտել...  
Ստեփանն, ես կարելի է մեռնեմ... շուտ վազիր և բժշկին  
կանչիր... եթէ զբաղւած կըլինի, ասան որ վիզիտին չե-  
ցուն մանէթ եմ տալու... Թող շուտով գայ էստեղ...  
Ստեփանն, շուտ... բժիշկ... մաչրիկ...

[Ստեփաննը շտապով դուրս է գնում. մ'աճում է նազլուն]

1834.

Տ Ե Ս Ի Լ XV

Ղազար եւ Նազրու

Նազրու (գարնուրած)

Վնչ, քուսանամ... Ղազար ջան, թնչ է պատահել...  
Թնչ է, չարդ տանեմ...

Ղազար.

Մայրիկ, մեռնում եմ... խօրեր եմ ընկել... փորս  
ղրղուում է, ձեռքերս ուզում են կապտել... վնչ...

Նազրու (Մերսետով)

Որդի, ոչինչ չըկայ, մի վախենար... Բաւն, Ղա-  
զար... ոչինչ չըկայ... փառք Աստուծոյ, գոյնդ պարզ է,  
ինքդ էլ առողջ ես. խօրեր ընկած մարդ շատ եմ տեսել...  
էդպէս չի լինում, որդի... մի վախենար...

Ղազար (փորս ինչ սիրտ առած)

Բաս մնց է լինում:

Նազրու

Ո՞նց պիտի լինի—խօրեր ընկածը էն սահալթին  
կըլուծի, սիրտը կըլսառնի, կըթուլանայ, ջանը կըկնարտի,  
կուչ կըզայ...

Ղազար

Բաս ես չեմ կապտել, կուչ չեմ եկել... մի լաւ  
մտիկ արն:

Նազրու

Չէ, չէ, ամենևին... Աստուած վկայ է, որ ոչինչ չըկայ:

Ղազար (ոտետով իրան հայելու մէջ)

Ճշմարթեամբ... բաս փորս ինչու էր զրղուում:

Նազրու

Ո՞վ գետէ, որդի, կարելի է մըսել ես... ամեն մի փո-  
րի զրղուալը խօ խօրեր չի, որ էդքան վախենում ես:

Ղազար (ոտետով իրան)

Չէ, փառք Աստուծու, դեռ ոչինչ չըկայ:

Նազրու.

Ի հարկէ՛ ոչինչ չըկայ... Որդի, մատաղ կտրի,  
մատանդ...

Ղազար

Մատաղը՝ բժիշկին է, բժիշկը, հասկանում ես:

Նազրու.

Հողեմ բժիշկների գլուխը... նրանք չէին, որ էնքան  
մարդ սաղ-սաղ սպանեցին... մարդ նրանց կըհաւատան:

Ղազար

Բաս նրանց չըհաւատամ, քեզ սէսներին հաւատամ...  
Ուրեմն աշխարհքս անտէր է մնացել, որ նրանք  
մարդ սպանեն... կամ նրանք խիղճ չունին, նրանք հոգի  
չունին... Ուրեմն բժիշկները ոչ մի դատաստանից չեն վա-  
խենում...

Նազրու

Բաս էնքան որ ասում են, սուտ է էլի՞:

Ղազար

Ի հարկէ սուտ է... էն էլ ինչպիսի՞ սուտ—սպիտակ  
սուտ, պոչաւոր ու չալ սնուտ... էդ մտքիցդ միանգամայն  
հանիր... էդպէս բաներ ոչ պատահել է և ոչ էլ կըպատահի:

Նազրու

է, ասում ես էլի՞:

Ղազար

Նրանք մարդ փրկող են և ոչ թէ մարդ սպանող...  
(Նախասենեակում լսում է բժշկի ձայնը. «այ տղայ այս  
ինչ է թափած գետնի վրայ, խօ չի փխսել . . . « Ստեփանի,  
մայր, «ոչ, դոխտուր ջան, ջուր է թափած, ջուր»):

Տ Ե Ա Ի Լ XVI.

Ղազար, Նսազու և Բժիշկ

Բժիշկ [հեռից]

Բարև ձեզ... ո՞վ է հիւանդը:

Ղազարը (մտնումսով)

Համեցէք, պարոն բժիշի... ես եմ հիւանդը... կար-  
ծեմ, խօլեր եմ ընկել, բայց մայրս հաւատացնում է, որ..

Բժիշկ [ստանձին]

Միծաղաշարժ հիւանդ է... (բարձր) Պարոն, լսողքեմ  
ասացէք... այդ բարձը... ճշմարիտ, ոչինչ չեմ հասկա-  
նում...

Ղազար

Փորս զրդո՞ւմ էր, պարոն բժիշի, վախեցայ, որ յան-  
կարձ, Աստուած մի արասցէ, մի անբախտութիւն պա-  
տահի ինձ... և որովհետև լրագրում կարդացի, որ  
փորը պէտք է շատ տաք պահել... ուստի ես...

Բժիշկ

Ի հարկէ, և հարկէ... պէտք է փորը տաք պահել .  
բայց բաւական է, եթէ միայն Փլանդերով կապէք... սա-  
կայն բոլորովին խօլերի մի ճշան չեմ նկատում ես ձեր  
դէմքի վրայ:

Ղազար (դետեւում դեմքը հայելու մէջ)

Ճշմարիտ... (մտնումսով բժշկին) խի էս ճակատիս  
կապուտը...

Բժիշկը (զմնում)

Կարելի է դեպքերէ էք մի բանի, կամ վայր էք ըն-  
կել... վերջապէս այդ խօլերի ճշան չէ:

Ղազար

Պարոն բժիշի, ես կասկածում եմ... ես վախենում  
եմ, որ էս կապուտը քանի գնայ, էնքան մեծանայ և վերջը  
ամբողջ մարմինս ծածկի...

Նսազու

Որդի, իզուր լինչ ես վախում... մի սահաթ սրա-  
նից տուաջ վեր չ'ընկանք և ճակատդ կապտացրի... ինքն  
երան խօ չի կապուել, որ վախում ես:

Բժիշկ

Ինչպէ՞ս է ձեր ակտիֆակը:

Ղազար (ստանձին)

Հալբաթ մի բան կայ, որ հօսէս հարցնում է...  
(բարձր) Փառք Աստուծոյ, ակտիֆակս լաւ է:

Բժիշկ

Խօ չէք լուծէլ:

Ղազար

Փառք Աստուծոյ, դեռ ոչ... բայց քիչ էր մնում, որ  
լուծէի...

Բժիշկ

Իսկ չէք փխսել:

Ղազար (ստանձիս)

Չէ, մի բան կայ... (բարձր) Փառք Աստուծոյ, դեռ  
չեմ փոխել, բայց քիչ էք մնում...

Բժիշկ

Գիշերները անհանգիստ խօսէք լինում:

Ղազար

Շնտ անհանգիստ եմ լինում գիշերները, ալ բժիշկի,  
շնտ... Շուտ-շուտ զարթնում եմ, փորս եմ տեսնում, կար-  
քովիայ եմ փչում, վերմակիս և բալլիս տակ սխուժում եմ  
ճրագով զննել, որ տեսնեմ խօսեմ փոխել կամ դրա  
պէս մի բան խօսիս արտահանել... Երբեմն հայելու մէջ  
մտիկ եմ անում, որ տեսնեմ թէ խօսեմ կուշ եկել, կամ  
խօսեմ կապուել... Երբեմն էլ կապուել եմ խմում...

Բժիշկ

Դուք ի դուր էք այդպէս անհանգիստ լինում և  
կապուել խմում... դուք լնձանից էլ առողջ էք և խօսելի  
մի նշոյ անգամ չըկայ ձեզանում:

Ղազար

Խնդրեմ, պարոն բժիշկ, եթէ, Աստուած մի արաս-  
ցէ, մի բան կայ, միք ծածկիլ... ուղիղն ասացէք: Գուցէ  
դուք կարծում էք, որ ուղիղն ասելու լինէք, ես յան-  
կարճ կը վախենամ... Բայց հաւատացնում եմ ձեզ, որ  
ես վախկոտ մարդ չեմ...

Բժիշկ

Ես ձեզ հաւատացնում եմ, որ դուք բոլորովին ա-  
ռողջ էք:

Ղազար (Դիտելով ձեռքը և սղմելով փորը)

Ճշմարիտ:

Բժիշկ

Ի դուր էք դուք վախենում, պարոն...

Ղազար

Պարոն բժիշկ, ե սէր Աստուծոյ, թէ մի բան կայ,  
ասացէք... Եթէ կամենաք, հարկը կաթիլ կապուել կը  
խմեմ... (ցոյց տալով սրակները) ահա տեսնում էք—այս-  
տեղ կայ ամեն տեսուկ կապուելներ՝ Բոտկինի, Վալերիանի,  
Հոֆմանի, Ինօգեմցեվի, Մեաստի... Եթէ հարկաւոր է,  
կարող եմ վաննայ էլ նստել...

Ստեփան

Աղա, կամենաք՝ ջուր տաքացնեմ վաննի համար:

Բժիշկ

Ես ձեզ խորհուրդ եմ տալիս, որ հեռացնէք այստե-  
ղից բոլոր կապուելները և վաննան, որովհետեւ սոքա բոր-  
բն էլ աւելորդ են...

Ստեփան (ցոյց տալով մեծ որակիւն)

Գոխտուր ջան, խի էս գուռնամ:

Ղազար

Ինչպէ՞ս թէ աւելորդ...

Բժիշկ

Այո, բոլորովին աւելորդ են, բոլորն էլ դուրս տարէք,  
սոքա միայն վախեցնող են, ուրիշ ոչինչ... խի եթէ մի  
բան պատահի, Տէրն մի արասցէ, ինձ խիոյն կան-  
չեցէք և ես շուտով կըզամ, դեղորայքն էլ հետս... ան-  
հող կացէք և մոռացէք խօսելը...

Ղազար

Պարոն բժիշկ, ես էլ եմ ուզում մոռանալ... բայց  
որ չի լինում...

Բժիշկ

Կըլինի, կըլինի, դուք միայն հեռացրէք սենեակից  
այս սրսիկները, վանճան, գեղորայքը...

Ղազար

Տեսնենք, բանը բան ցոյց կըստայ...

Նազու

Որդի, մատաղ կարի, մատաղ...

Բժիշկ

Դուք միայն զգուշացէք խակ սրտուղներ և դժա-  
րամարս կերակուրներ գործ ածելուց...

Ղազար

Օ, ես ամբողջ մի ամիս է, որ փահրիզ եմ պահում...

Բժիշկ

Մաքրութիւն պահպանեցէք և շուտ-շուտ լողացէք,  
սպիտակեղէնները շուտ-շուտ փոխեցէք...

Ստեփանն (ստանձինն)

Երկուսն էլ մէկ խելքի են երևում հոն:

Բժիշկ

Աշխատեցէք շուտ-շուտ փոխել բնակարանի օդը,  
զգուշացէք բակը ջրելուց, սենեակների յատակը լւանալուց,

Ստեփանն (ստանձինն)

Օրհնելքո բերանը, գօխտուր ջան:

Բժիշկ

Կաթսաները բանացնելուց առաջ պէտք է եռա-  
ցող ջրում լւանալ, նոյնպէս և տարեկները, բաժակները,  
զանախները, սլատառաքաղները և գդալները:

Ստեփանն (ստանձինն)

Լեզուդ պապանձել...

Ղազար

Լսում ես, Ստեփանն:

Ստեփանն

Հրամբելես, աղա:

Բժիշկ

Անձեռնոցիկները, սիւռոցները և թէյի անօթի սըր-  
բիչները պէտք է պահարանում պահել չորացած և այն-  
տեղից հանել միայն գործածելու ժամանակ:

Ղազար

Պարոն բժիշկ, այդ բոլորը գրւած էր...

Բժիշկ

Առհասարակ դուք աշխատացէք չըրիտել ձեր կեան-  
քի սովորական եղանակը, եթէ նա կանոնաւոր է եղել:  
Սակայն անհրաժեշտ է զգուշ լինել մըսելուց, խոյս աւալ  
այն բաներից, որոնք կարող են յոգնեցնել և թուլացնել  
մարդուն, որոնք են՝ երկար ժամանակ արթուն մնալը,  
ուժից վեր ֆիզիքապէս և մտաւորապէս աշխատելը և  
ուրիշ չափազանց աշխատութիւններ: Մանաւանդ պէտք  
է զգուշանաք արբեցողութիւնից:

Ղազար

Մի ամիս է, պարոն բժիշկ, որ խկի մի կաթիլ գե-  
նի, արաղ չեմ խմել:

Բժիշկ

Դի՛նի կարող էք խմել, միայն կարմիրը, այն էլ այն-  
պիսին, որ խօլերը երևալուց առաջ է շիշերի մէջ ածւած:

Կարող է՞ք գործ անել թէ՛յն և կօժէ՛լ հետ օղի, կոնեակ,  
օգտակար են քիչ քանակութեամբ ուօմ, շամպանիա:

Ստեփան

Դօխտուր ջան, ի՞նձ էլ է օգտակար:

Բժիշկ (Ստեփանին)

Այո, բոլորին: Միայն սէտք է կերակուր սատրաս-  
տելու և սեղան ծածկելու ժամանակ ձեռքերդ լանաս  
սապոնով և խոզանակով:

Ստեփան

Ամեն օր լանում եմ քացախով, դօխտուր ջան:

Ղազար

Այդ բոլորը կատարում ենք, սրբոն բժիշկ, իսկ էք  
անխճուած ճանճէրը...

Բժիշկ

Այո, ճանճերն էլ վտանգաւոր են... աշխատեցէ՛ք  
ամեն մի ուտելիք և խմելիք ծածկած պահել... առհա-  
սարակ զգուշացէ՛ք...

Ղազար

Չի լինո՞ւմ, սրբոն բժիշկ, չի լինո՞ւմ... ինչքան քը-  
շում եմ, ինչքան հալածում եմ, ինչքան չարանում եմ,  
բայց էլի ես չեմ կարողանում նրանց օխտիցը դա՛ւ... մէկ  
էլ տեսնես, յանկարծ մէկը տղգալով եկաւ ու քթիթ  
բազմեց...

Բժիշկ

Դօխտուր Կօխը իր հետազօտութիւնները ժամանակ  
մի ճանճի աջ թւի ու փորի վերայ խոշորացուցով նկա-  
տել է երկու հատ միկրօբներ... ուստի խորհուրդ են  
տալիս զգուշանալ... Յտեսութիւն... Մի բան եղած ժա-

մանակը, ինձ խիոյն կանչեցէ՛ք... Յտեսութիւն...  
(Դուրս է գնում)

Ղազար

Յտեսութիւն... (ստանձին) Դօխտուր Կօխը... Մթթէ...

Տ Ե Ս Ի Ղ XVII

Ղազար, Նազրու եւ Ստեփան

Նազրու

Որդի, տեսա՞ր—որ ոչինչ չբխայ և ի դուր էլի վախե-  
նում...

Ղազար

Դօխտուր Կօխը... երկու հատ միկրօբներ...

Ստեփան

Աղա, վանճած դուրս տանէ՞մ...

Ղազար

Մի ճանճի աջ թւի և փորի վրայ... Մթթէ...

Նազրու

Որդի, իմ խօսքերին չէլի հաւատում, տեսա՞ր—էք  
էլ քօ բժիշկը:

Ղազար

Դօխտուր Կօխը... խոշորացուցով... երկու միկրօբ-  
ներ... Մթթէ... (Բարձր) Ստեփան, Ստեփան...

Ստեփան

Համմէ, աղս, հատեղ եմ, հատեղ...

Ղազար

Ստեփան, ես քեզ հրամայում եմ, ես քեզ պատուի-



բում եմ, որ էս սահալթս բոլոր ճանճերին դուրս քշես  
էստեղից... Նթէ մէկ հատ թողնես, իմ արևը վկայ է,  
էնպէս օյին կը բերեմ գլուխդ, որ շան գլուխը եկած չը-  
լինի... հասկանճում ես... էնպէս օյին կը բերեմ գլուխդ,  
որ հօրդ հարսանիքը միտդ գայ... Մի հատ չը թողնես...  
Մի հատ... հասկանճում ես... թէ չէ՛ աչքերդ կը հանեմ...  
Սրանից յետոյ էստեղ կը կանգնես և ճանճերի վրայ կը  
հսկես, որ մի հատ չը համարձակի մտնել էստեղ... քո  
գործը էդ կը լինի սրանից յետոյ... իսկ հիմա բոլորին դուրս  
քշէր... Մի հատ չը թողնես... (հաց անելով պահարանի  
դուռը) Ես էլ մտնում եմ էստեղ մինչև քո դուրս քշելը...  
մի հատ չը թողնես... (Մտնելով պահարանը) Մի հատ,  
հասկանճում ես (կողպելով պահարանի դուռը) Մի հատ...  
մի հատ...


Նազլու (Առանձին)

Տէր Աստուած, Դու օղորմիս...

Ստեփանն ( Առնելով մի շոր սկսում է ծանծերին քշել )

Էս էր պահաս, ճանճերի դարաւուլ էլ դառանք...  
ճանճի թուր էլ չունիմ, որ բոլորին մէկ-մէկ կոտորեմ...  
բը՛ շ... բը՛ շ... բը՛ շ...

ՎԱՐԱԳՈՅՐ



«Ազգային գրադարան»



NL0243317

Հիմնադրամ

1992

« Ազգային գրադարան



NL0243321

« Ազգային գրադարան



NL0243320

« Ազգային գրադարան



NL0243319

